Հոդված 19.4. Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը

1) ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 10000-ապատիկի չափով
2) վառելիքաէներգետիկ հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
3) շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսպատման, շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
4) գունագեղ քարերի, բացառությամբ վանակատի (օբսիդիանի), յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 10000-ապատիկի չափով
4.1. Վանակատի (օբսիդիանի) յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
5) մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 10000-ապատիկի չափով
6) հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝	
- արդյունաբերական (շշալցման) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 5000-ապատիկի չափով
- արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
-բուժական (ռեկրեացիոն) նպատակներով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
7) ջրօգտագործման թույլտվության տրամադրման, թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, թույլտվության վերաձևակերպման համար՝	
ֆիզիկական անձանցից	բազային տուրքի չափով
իրավաբանական անձանցից	բազային տուրքի 10-ապատիկի չափով

8) *(կետն ուժը կորցրել է 23.06.15 ՀՕ-112-Ն)*

9) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
«10) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի նպատակով մեկանգամյա թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 20-ապատիկի չափով
11) Կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի թույլտվություն տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով»